

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2018թ. նոյեմբերի 23-ի նիստի

(արձ. N5)

1. Հավանություն տալ ինստիտուտի շրջանավարտների ակումբ հիմնելու առաջարկին և ներկայացված հայտարարության բովանդակությանը,

- հայտարարությունը տեղադրել ինստիտուտի կայքում և արագ տարածել հնարավոր բոլոր միջոցներով,
- վավերացնել ԳԽ անդամ հանդիսացող ինստիտուտի շրջանավարտներից կազմված շրջանավարտների ակումբի հիմնադիր ժողովի կայացման և ԱՊՏԿ դեկան Արմեն Հարությունյանի՝ ակումբի նախագահ ընտրվելու փաստը,
- հանձնարարել իրավախորհրդատու Է. Մանասերյանին շտապ զբաղվել Պետոռեգիստրում ԵԹԿՊԻ-ի շրջանավարտների ակումբի գրանցման գործընթացով:

1.1 Ինստիտուտի առկա ֆինանսական վիճակի մասին Լ. Արզումանյանի հաղորդումն ընդունել ի գիտություն,

- այսուհետ ինստիտուտի ռեկտորի կողմից ֆինանսական հաշվետվության պարբերաբար ներկայացումը Գիտական խորհրդին համարել պարտադիր:

1.2 Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ կուրսերի ղեկավարների հետ համատեղ, կազմակերպել դիպլոմային աշխատանքների համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվ և ներկայացնել համապատասխան հայտ:

1.3 Կանոնակարգել երեկոյան ժամերին ինստիտուտում դերասանական, ռեժիսորական կուրսերի ուսանողների մասնագիտական փորձերի կազմակերպման գործընթացը,

- փորձերի ընթացքում կուրսի ղեկավարի (կամ դասախոսի) ներկայությունը համարել պարտադիր:

1.4 Առաջիկայում ինստիտուտի անձնակազմի հաշվառման բաժնի համար ստեղծել աշխատակազմի տվյալների շտեմարան:

1.5 Հանձնարարել ֆակուլտետների ղեկանների միջոցներ ձեռնարկել շտապ հավաքագրելու ուսման վարձավճարները:

1.6 հանձնարարել ՈՒԳԱԳ պրոռեկտոր Ն. Սարգսյանին և ֆակուլտետների ղեկաններին վերանայել դասացուցակը և 2019թ. հունվար ամսից գործողության մեջ դնել նոր տարբերակը:

1.7 ՈՒԳԱԳ պրոռեկտոր Ն. Սարգսյանի ղեկավարությամբ վերանայել ինստիտուտում գործող բոլոր իրավական նորմատիվային ակտերը:

1.8 Հանձնարարել Կերպարվեստի և անիմացիայի ամբիոնի վարիչ Դավիթ Մինասյանին կազմել նկարիչների խումբ և ներկայացնել միջանցքների և լսարանների նկարչական ձևավորման նախագծեր:

1.9 Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին և ամբիոնների վարիչներին ծանոթանալ ուսանողների կողմից գրավոր ներկայացված դժգոհություններին: Արդյունքները քննարկել ս.թ. դեկտեմբերի 1-ին:

1.10 Ս.թ. դեկտեմբերի 3-ից խզել ինստիտուտի կարիքների համար վարձակալված «Նիսսան Տիդա» մակնիշի 90 MU101 համարի մեքենայի սեփականատեր Շուշանիկ Բաղայանի հետ կնքված պայամանագիրը,

- սույն պայմանագրի խզման կապակցությամբ, նշված մեքենան սպասարկող վարորդ նորիկ Լիպարիտի Հայրապետյանի համար ձևակերպել հարկադիր պարապուրդ մինչև 2019թ. հունվարի 1-ը:

1.11 Հավանություն տալ ինստիտուտի կառուցվածքում առաջարկվող փոփոխությունների նախագծին և ներկայացնել ԳԽ առաջիկա նիստի հաստատմանը:

1.12 Հավանություն տալ ինստիտուտի կառուցվածքային փոփոխություններից բխող հաստիքացուցակում նախատեսվող փոփոխությունների նախագծին և ներկայացնել ԳԽ առաջիկա նիստի հաստատմանը:

2. ԵԹԿՊԻ-ի խորհրդի կազմում ընդգրկված պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների անվանացանկում կատարել մասնակի փոփոխություն՝ Լատրա Մուրադյանի և Հենրիկ Հովհաննիսյանի փոխարեն առաջադրելով 2 նոր թեկնածու,

2. 1 արձանագրել, որ ԵԹԿՊԻ-ի խորհրդի կազմում մասնակի փոփոխություն կատարելու և առկա 2 տեղերը լրացնելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

2.2 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները,

2.3 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ԵԹԿՊԻ-ի խորհրդի կազմում ընդգրկվելու համար ձայների մեծամասնությամբ (29 կողմ, 3 դեմ, 1 անվավեր) ընտրվել է Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի դեկան Աննա Յուրիի Երզինկյանը,

2.4 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ԵԹԿՊԻ-ի խորհրդի կազմում ընդգրկվելու համար ձայների մեծամասնությամբ (28 կողմ, 4 դեմ, 1 անվավեր) ընտրվել է Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի դեկան Արմեն Վարուժանի Հարությունյանը:

Գիտքարտուղար

Գ.Հովհաննիսյան